

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

212

ՀԵՐԱԿԱՆ ԶՐՈՒՑՑՆԵՐ
ՈՒՅՑԿԻ ՇՈՒՐՉԸԸ

ԶՐՈՒՑՑ ՅԵՐԿՐՈՐԴ

ՈՎՔԵՐ ԵՆ



ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐՆԵՐԸ

Հրազդակուրյուն Հ. Ա. Կ. Ց. Մ. Կենս-
կոմիտե կից պիոներների կենտր. բյուջեվ.

1925


ԹԵՂԻՆԵՐԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ
ԽԱՐՈՒՅՆՎԱԾ ՇՈՒՐՋԸ

10/2L 2017

ՈՎՔԵՐ ԵՆ
ՊԱՏԱՆԻ
ՊԻՈՆԵՐՆԵՐԸ

ԶՐՈՒՅՑ ՅԵՐԿՐՈՐԴ

Հրատարակություն պ. կ. ՅԵ. Մ. Կենս-
կոմին կից Ֆիզիկական կենս. բաւողի.



ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՊԱՏԱՆԻ ՊԻՌՆԵՐՆԵՐԸ

Պատանիներ, ձեզանից յերեխ շատ
քչերը գտնվեն, վորոնք կարողանան բա-
ցարել, թե ովքե՞ր են պիռներները,
Փորձենք այդ ինքներս անել:

Առաջներում, յերբ անհայտ ու չու-
սումնասիրված շատ յերկրներ կային,
յերբ շատ անհասկանալի ու հետաքրքիր
գյուտեր եին անում Ամերիկայում,
Աֆրիկայում և Ասիայում, հաճախ կազ-
մակերպում եին եքսպեդիցիաներ այ-
սինքն, դեպի այն յերկրներն արշավող
հետազոտողների խմբեր:

Այդ անվախ մարդիկ, ամեն քայլա-
փոխին իրենց կյանքը վտանգելով,
վտանգներին քաջությամար դիմադրե-
լով, ճանապարհորդում եին յերկրե-յեր-
կիր, հետազոտում նոր՝ մարդկությանը



1-2390 գր

Գրառեպիլ. № 61 թ.

Տիրաժ 7,000

Պիտհրատի յերկրորդ տպարան Յերևանում.

դեռ անհայտ տեղեր, վորտեղ դեռ մարդու վոտքը չեր կոխել:

Հազարավոր վտանգների մեջ, վայրենիների հարձակման սպառնալիքի տակ, գաղաններից հետապնդված, մարդկանցից հեռու, այդ անվեհեր մարդիկ տանում եին իրենց գործը, բաց եին անում մարդկության համար նորանոր յերկրների դռներ:

Դրանց կոչեցին ահա—առաջապահներ կամ պիոներներ:

Վորպես առաջապահներ, հաստատ կերպով գնում եին նրանք դեպի իրենց նշած նսպատակը, հաշվի չառնելով ճամփին պատահած բազմաթիվ վտանգները:

Բուրժուաների տիրապետության ուրերին, յերբ բանվորը չեր կարող մի ավելնորդ ձայն հանել, յերբ մեր հայրերը աշխատում եին գործարաններում որպական 12-14 ժամ և ավելի, ու դրա փոխարեն ստանում վողորմելի կոպեկներ, այդ ժամանակ ել ահա հանդես

յեկան առաջապահ բանվորներ, վորոնք սկսեցին կազմակերպել բանվոր դաստիարակին, ձնշողների դեմ կռվելու համար:

Յարի կառավարությունն այդ համառ նեղափոխական-մարտիկներին հարյուրներով գնդակահարում ու կախում եր, հազարներով սիբիր աքսորում, բայց նրանք, չընալած այդ հետապնդումներին, շարունակում եին իրենց սկսած գործը. ազատազրում եին բանվորին բուրժուազիայի լծից:

Բանվորների համար պայքարող այդ հեղափոխականներն՝ առաջապահ մարդիկ, վորոնք զոհաբերում եին իրենց կյանքը, հեղափոխության համար, բանվորական հեղափոխության պիոներները — դրանք բոլոր միասին ինքը կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունն են:

Բոլշևիկները — Կոմունիզմի պիոներներն են:

Թուսառանի կոմ. (քոյլեվիկ.) կուսակցության խոռորագույն առաջնորդը, պատանի պիոներների պապը — վ. ի. Լենինը, կոմունիզմի ամենառաջին պիոներն եր:

Պատանի պիոներները գնում են իրենց հայրերի ճանապարհով:

Պըլետարների յերեխաներն իրենց հայրերի նման կը պայքարեն կոմունիզմի և նրա կառուցման դործի համար:

Պըլետարների յերեխաները պիոներներն են: Ապագայի նոր հասարակության առաջավոր մարդիկ:

Պատանի պիոներներն իրենք իրենց ձեռքերով պիտի շնորհ կոմունիստական հասարակությունն, ինչպես վոր վայելում ե պիոներներին, ուշք չը դարձնելով անհաջողությունների վըրա, հաշվի չառնելով անձնական վըտանգները, պայքարելով միայն բանվոր դասակարգի հանրային շահի համար:

Պատանի պիոներները ցույց կը տան, վոր իրենք իրենց հայրերի՝ կոմունիզմի պիոներների կամ բոյլշևիկների արժանավոր զավակներն են և իրենց պապի, բանվորական դասակարգի պայքարի պիոներ՝ իսկէի արժանավոր թոռներն են:

Բանվորները, պատանի պիոներների հայրերը, զոհաբերում եին իրենց կյանքը փթում բանվորում, զնդակահարվում ու կախվում եին, շղթայակապ աքսորվում եին հեռավոր սերիք և այդ բոլորը նրանք տանում եին աշխատավոր ժողովրդին, բուրժուատների ու կալվածատերերի ծանր լծից ազատելու համար:

Պատանի պիոներներն իրենց ուժերի չափ մասնակցում են այդ պայքարին, պատրաստվում են պայքարելու:

Նրանք ապագա կոմունիստներ՝ ապագա բանվորներն են: Նրանք իրենց հայրերի պես պատրաստ կը լինեն ամեն

բոպե իրենց կյանքը գոհելու, մեռնելու,
յեթե այդ պահանջեն բանվոր դասա-
կարգի շահերը և դժա համար ել, յերբ
պատանի պիոներներին վողջունում են
ու ասում «Բանվորական պայքարի
համար յեղիր պատրաս», նրանք միա-
համուռ և ուրախ պատասխանում են
«Մի՛ց պատրաս ե՛ն»։ Յեզ իսկապես,
նրանք միշտ պատրաստ են բանվոր
դասակարգի շահերի և բարիքի համար
պայքարելու։

Նրանք կը կովեն ամբողջ աշխարհի
հեղափոխության համար։ Գեներալների,
կալվածատերերի և բուրժուաների դեմ,
նրանք կը կրեն ամեն տեսակ զրկան-
քներ, կը փթեն բանդերում, բայց կը
կովեն իրենց բոլոր ուժերով բուրժուա-
ներին հաղթելու համար։

Բայց պըոլետարների յերեխաներից,
պատանի պիոներներից, յերբեք լավ
մարտիկներ դուրս չեն գա, յեթե նը-
րանք իրենց հայրերի—կոմունիստների

և ավագ յեղբայրների—կոմյերիտական-
ների զեկավարությամբ չաշխատեն։
Թե կոմունիստները և թե կոմյե-
րիտականներն ու պիոներները ձգտում
են մի ընդհանուր մեծ նպատակի, կո-
մունիզմին հասնելու համար տանող ուղի-
ները տարբեր չեն, այլ կա միայն մի
ընդհանուր ուղի, դա բանվոր դասա-
կարգի պայքարի ուղին է։

Յեզ պատանի պիոներները, վորոնք
պատրաստվում են այդ կովին, կարող
են աշխատել միայն կոմկուսի և և. կ.
Յե. Մ.—յան զեկավարությամբ։

Կանցնեն տարիներ։ Պատանի պիո-
ներները մեծանան, կը դառնան կոմ-
յերիտականներ և անմիջական մասնակ-
ցություն կունենան բանվորի պայքա-
րի գործում։ Ավելի կը մեծանան, կը
դառնան կոմունիստներ և կը կովեն
կոմունիզմին հասնելու համար։

«Փոխարինողները գալիս են» ասում

են պատահի պիոներները։ Նրանց ուղին կոմ-կուսակցությունն եւ կոմյերիտի միջոցով, նրանց ուղին բանվոր դասակարգի պայքարի ուղին եւ։

Պատահիներ, ձեզ յերեխ ասել են արդեն, վոր ամբողջ աշխարհում հիմա դասակարգերի կոփի եւ տեղի ունենում։ Ձեզ յերեխ պատմած կը լինեն, վոր ամբողջ աշխարհը բաժանված եւ յերկու անհաշտ բանակների-մի բանակում բանվորներն, իսկ մյուսում՝ բուրժուները։ Բուրժուների ձեռքումն են գրտնվում գործարանները, յերկաթուղիները, նաև բանակները, հանքերը։ Բոլոր այդ ձեռնարկներում աշխատում են բանվորներն, իրենց ամբողջ ուժերը նվիրում են այդ գործի համար և փոխարեն ստանում են մի քանի կոպեկներ, վորոնք հազիվ ծայրը ծայրին են հասցնում և շատ անգամ չեն ել կարողանում կերակրել բանվորին ու իր ընտանիքին։

Բանվորների աշխատանքի հաշվին

հարստանում ու տողում են բուրժուները։

Մի կողմից բանվորը սովից մաշվում է, իսկ մյուս կողմից բուրժուան հազարներ եւ շաբատում իր բավականությունները կատարելու համար։

Դասակարգերի կովի ընթացքում բանվորը ձգտում է վերջ տալ այդ անգութ շահագործմանը, հանձնել գործարաններն աշխատավորթյան ձեռքը, իսկ բուրժուան ձգտում է պահպանել իր շահագործելու իրավունքները, կապիտալիստի վառավոր կյանքը և բանվորի թշվառությունը։

Թե բանվորը և թե կապիտալիստներն աշխատում են ամեն մեկն իրենց վորով դաստիրակել մատաղ սերնդին։

Բուրժուազյան ուզում եւ դաստիրակել յերեխաներին այնպես, վոր նրանք բոլորովին չը կասկածեն ել թե դաստիրագային կոփի գոյություն ունի, գոն

լինեն յեղած կարգերից և բուրժուաների
շպրտած հացի փշրանքներից:

Իսկ բանվորներն իրենց յերեխաներին
դաստերակում են դասակարգային վո-
գով, հասկացնում են նրանց իրենց
դասակարգային շահերը և տարած պայ-
քարը:

Կապիտալիսաները յերեխաներից կա-
պիտալի ստրուկներ են պատրաստում,
իսկ բանվորներն իրենց յերեխաներից
հեղափոխության մարտիկներ են պատ-
րաստում:

Յեվ, յեթե բանվոր դասակարգն իր
ձեռվ դաստերակելու համար, ստեղծում
ե պատանի պիտուկների կազմակերպու-
թյուն, ապա պարզ ե, վոր բուրժուա-
ներն ել պետք ե ստեղծած լինեն մա-
նուկների կազմակերպություն, իրենց
ձեռվ դաստերակելու համար և այդպի-
սի կազմակերպություն բուրժուական
յերկրներում գոյություն ունի «սկա-
ռատ» անվան տակ:

Դուք յերկի այդ սկառատների մա-
սին լսած կը լինեք: Նրանք առաջ մեզ
մոտ ել կարին բայց մեր կառավարու-
թյունը նրանց ցըեց:

Սկառատները հայտարարում են, վոր
նրանք քաղաքականությամբ չեն զբաղ-
վում, վոր նրանց համար միմնույն ե
բուրժուատ թե բանվոր և վոր նրանց նպա-
տակը բոլորովին այլ ե. պատրաստել
մտավորապես և ֆիզիքապես զարգա-
ցած մարդիկ:

Հիմա տեսնենք իսկապես այդպես ե,
ինչպես նրանք են ասում, թե սկառա-
տների, անկուստակցական դիմակի տակ
թագնված ե բուրժուայի լակեյը:

«Բոյ-սկառատ» խոսքը յեթե անգե-
րենից թարգմանենք, կը նշանակե հե-
տախույզ-տղա: Այդ անունը հենց ցույց
ե տալիս, վոր սկառատական կազմա-
կերպությունը զինվորական հետախու-
ռական նպատակ ունի:

Բայց վ՞որ բանակում: Կարմի՞ր...

Իհարկե վոչ։ Սկառւաները սպիտակ բանակների հետախույզներն են։ Նրանք ոգնում են բուրժուաներին նորանոր հարսառություններ զրավելու։

Ճիշտ ե, սկառւաներն ասում են, վոր հետախույզ ասելով պետք ե հասկանալ ճշմարտություն ու բարություն վորոնող մարդ, բայց մենք գիտենք, վոր «սկառւա» հետախույզները բուրժուաների հաղթանակի ուղիներ են փնտում, այդ յերեսում ե նրանց տարած աշխատանքներից։ Մենք այդ գիտենք, վորովհետեւ տեսնում ենք, վոր նրանց ղեկավարում են սպիտակ բանակների սպաները և վերջապես բուրժուաների և բանվորների, կովի ժամանակ, նրանք մանում ելին կամավորական սպիտակ, բանակի շարքերը։

Վերցնենք սկառւաների որենքները։ Այնաեղ զրվածե։ «Սկառւալ հավատարիմ և աստծոն, թագավորին և հայրենիքին»։ Մհա թե ի՞նչ դրոշակի տակ են

գնում սկառւաները, նրանք ո՞ւմ են հավատարիմ և ո՞ւմ համար են հետախուզություն անում։

Դուք յերկի լսել եք, վոր բուրժուաներն իմպերիալիստական կոփիսեր են մղում։ Իմպերիալիստական կովը՝ զամի քանի յերկրների բուրժուաների կոփի և շուկաներն իրար մեջ բաժանելու։

Քանի դեռ բուրժուազիան բավականանում ե իր յերկրի ներսում բանվորներին շահագործելով՝ ամեն ինչ դեռ խաղաղ ե։ Բայց, ինչպես ասում են ախորժակը ուտելիս ե բացգում։ Բուրժուաները սկսում են նախանձով նայել իրենց հարևան յերկրների բուրժուաների վրա, հուսալով այնտեղ ել հարըստություն ձեռք բերել։ Վաղ թե ուշ մի յերկրի բուրժուաների շահերը բախվում են մյուս յերկրի բուրժուաների շահերի հետ և այդ ժամանակ նրանց մեջ սկսվում ե կոփի։

Այդպիսի կոփվ յեղամվ, որինակ, 1914-
17 թ. Այդ կոփմբերը՝ պահանջուր
եր մեծ քանակությամբ զինվորներ-թշն-
դանոթի միս: Բայց լավ զինվոր կլինի
բուրժուական բանակում նա, ով չի ի-
մանում թե ում դեմ և ինչի համար ե
կովում, ով փակած աչքերով կմեռնի
«կրոնի, թագավորի և հայրենիքի» հա-
մար: Սկառտական կազմակերպու-
թյունը հենց այդպիսի զինվորներ մա-
տակարարող ե: Արտաքուստ գեղեցիկ
ու հետաքրքիր աշխատանքներով նրանք
գրավում են իրանց շարքերը տասնյակ
ու հարյուր բանվորի յերեխաներ, ծը-
ծում են նրանց միջից այն բոլորն
ինչ վոր հեղափոխական և փոխարե-
նը պատրաստում են նրանցից բուր-
ժուազիայի համար կովող ստրուկներ:


Ուրեմն, չարաչար ստում են սկա-
ռատները, յերբ ասում են, վոր իրենք
քաղաքական կլանքից հեռու են: Ուրե-
մն, նրանց անկուսակցականությունը

մի դիմակ ե, վորի աւակ նրանք թագց-
նում են իրենց իսկական դեմքերը:

Պատասի պիոներները—բանվոր գա-
սակարգի շահերի մարտիկներն են և
նրանք բացեիբաց ու պարծանքով այդ
մասին հայտարարում են, ասելով «բան-
վորների գործի համար յեղիր պատրաս»:

Սկառտները բուրժուազիայի մար-
տիկներն են, բայց վախկոտ մարտիկ-
ներ են. նրանք չեն համարձակվում այդ
մասին բացեիբաց հայտնել և թագնը-
վում են անկուսակցականների հետեւ:

Սկառտները նույնպես, պիոներների
նման, ասում են «յեղիր պատրաստ»-
«միշտ պատրաստ»: Բայց այն ժամա-
նակ, յերբ պիոներները բացարձակ ու
պարծանքով հայտնում են իրենց պատ-
րաստակամությունը վոչ թե մի փորեկ
բանի, այլ բանվոր գասակարգի համար,
սկառտներն ասում են «միշտ պատ-
րաստ», ցույց չունենալի, թե ինչի հա-
մար են նրանք միշտ պատրաստ:



Բայց մենք, ձեզ հետ միասին պիուներներ, արդեն գիտենք, վոր սկառատները միշտ պատրաստ են կովել բուրժուաների շահերի համար բանվորների դեմ:

Թող սկառատները գնան իրենց լակեյական ճանապարհով: Պատանի պիուներները կդնան իրենց հեղափոխական ուղիով, լ. կ. Յ. Մ.-ան, կոմկուսակցության հետեւից և միշտ պատրաստ կինեն բանվորի գործի համար:

Վորպեսզի պիուներներից պատրաստվեն լավ լենինականներ՝ բանվոր մարտիկներ, պատանի պիուներների ամբողջ աշխատանքը պիտի ընթանա վորոշակի մշակված ու ընդունված հինգ որենքներով: Յուրաքանչյուր պիուներ պիտի գիտենա այդ որենքներն ու հասկանա նրանց իմաստն ու նշանակությունը և վոր ամենապիշավորն ե, պիտի կատարե այդ որենքները: Պատանի պիուներների առաջին որենքն այսպես ե ասում

«Պիուները հավատաիմ ե բանվոր դասակարգին—իլյիչի ավանդներին»: Պատանի պիուներները բանվորների զավակներն են: Իրենց հայրերի, բանվորների շահերը նրանց համար ամենից թանգագինն ե: Այդ շահերը պաշտպանելու համար, նրանք պատրաստ են իրենց կյանքը դոհաբերել:

Վ. Ի. Լենինը-բանվոր դասակարգի զեկավարն եր, վորը հասցըեց բանվորներին մինչև հոկտեմբերյան հեղափոխությունը:

Իլյիչը մեռավ ու կտակեց մեզ զընալ դեպի վերջին մահվան կորիվ»:— ասվում ե պիուներական մի յերգի մեջ: Իլյիչը թողել ե մեզ իր ավանդները, վորոնցով զինվելով բանվոր դասակարգը հաղթում է պիտի հաղթի: Պատանի պիուներները հավատարիմ են իրենց պատիլիյիչի պատգամներին:

«Պիուները—կոմունիստի ու Կոմիերիսկանի կրստը յեղբայրն ու ողբա-

կանն ե:» **Ասում ե յերկրորդ որենքը:**

Կոմունիստները բանվորների առաջավոր մասն են կազմում, հասկանում են բանվոր դասակարգի առաջադրված ինդիքները և լուծում են տալիս այդ ինդիքներին:

Կոմունիստները ղեկավարում են բանվոր դասակարգի պայքարն ընդեմ բուժժուաների:

Կոմյերիտականները բանվոր յերիտասարդության առաջապահներն են, պատանի պիոներների ղեկավարները, կուսակցության փոխարինողները:

Թե կուսակցությունը և թե կոմյերիտարը բանվոր դասակարգի պայքարի պիոներներն են և պարզ ե, վոր պատանի պիոներները պիտի գնան նրանց յետելից, պիտի ոգնեն նրանց, իրենց աշխատանքները կտարելիս:

Պատանի պիոներների 3-րդ որենքն ասում ե:

«Պիոները-ընկեր ե մյուս պիոներներին յեվ ամբողջ աշխարհի բանվորների յեվ գյուղացիների յերեխաներին»:

Այս արդեն լիովին հասկանալի յեր բոլոր յերկրների պրոկետաքնների յերեխաների կուռ միությամբ ե միայն վոր պիոներները կարողանան կովել անվորի համար:

Մեր ուժը-մեր միության, մեր կազմակերպության ամրությունն ե:

Պիոները չպետք ե բաժանվի մյուս յերեխաներից. նա պետք ե աշխատի նրանց հետ միասին, նրանց ել պետք ե գրավի իր կազմակերպության մեջ, նըրանցից ել պետք ե պատրաստի բանվորական գործի համար կովող մարտիկներ:

«Պիոները կազմակերպում ե մյուս յերեխաներին յեվ ասսեակցում ե նըրանց հետ շշապատող հասարակական կյանքին»:

«Պիոները բոլոր յերեխաներին որինակ է Ծառայում» ասում ե չորրորդ որենքը:

Պիոները պարտավոր ե յերեխաների հորանոր խմբեր գրավել հասարակական կյանքի մեջ, պատրաստել նրանցից գիտակից բանվորներ։ Բայց այն ժամանակ այդ խմբերը կդան պիոներների հետեւց, յեթե պատանի պիոներներն իրենց անձնական վարք ու բարքով լավ որինակ ցույց կտան մյուս յերեխաներին։ Հենց դրա համար ել հիմնական լոգունզն ե. «Պիոներն որինակ պիտի լինի մյուս յերեխաների համար»։

«Պիոները ձգտում է զիսուրյան. զիսուրյունն ուժ ե բանվոր դասակարգի ազատգրության պայքարի» – ասում ե 5-րդ և վերջին որենքը։ Առանց զիսության չի կարող հաջող պայքար լինել։ Խոչպես ավագ պիոները – կոմյերիտականները – նույնպես ել պատանի պիոներներն ան-

դադար կրծում են իրենց փոքրիկ ատամներով գիտության զրանիտը։

Ռուս. կոմ. կուսակցությունը (բոյլշկիների) 13-րդ համագումարում վորոշվեց – պատանի պիոներների կազմակերպությունն անվանել Վ. Ի. Լենինի անունով։

Այդ անունը պատանի պիոներներին շատ բանի ե պարտավորեցնում։ Վորպեսզի պատավով կրի մեծ զեկավարի անունը պետք ե խիստ կերպով հետեւի իր վարմունքներին։

Յուրաքանչյուր պիոներ ինքն իրեն պիտի պարզի, թե ովքեր են պատանի պիոներները, ինչ նպատակների են նրանք հետապնդում։

Յուրաքանչյուր պիոներ պիտի կատարի պատանի պիոներների որենիների ու սովորունեները, իր պատի – Ի. յիշի ավանդները, պես ե պատրաստի բանվորի ազատգրման համար մղվող ծանր պայքարին։

ՊԻՌՆԵՐ ՅԵԹԵ ԶԵ՛Ս ԳՆԵԼԻ

«Մեր յեղբայրներն ամբողջ աշխարհում»,
 «Կազմակերպչական կառուցվածքը»
 «Առողջապահական կանոններ» (պլակատ)
 «Կարմիր գրոսանք»
 «Քրիստոս չհարյավ ի մեռելոց»

ԳՐ Ք ՈՒ Յ Կ Ն Ե Ր Ը

ԳՆԻՐ

ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅԱ ԿՏԵԱՅԻ

«Պիոներ պահպանիր առողջությունդ»

ԳՐ Ք ՈՒ Յ Կ Ն Ե Ր .

Մի մոռանա, վոր ամի՞ն մի պիոներ
 պետք է կարդա՞մ որ գրքայիները:



ԼՍԻՐ ՊԻՌՆԵՐ

ՀՈՒՆԴԻՆ ՍԿԶԲԱԿԻՆ ԼՈՒՅՈ Ե
 ՑԵՄՆԵԼՈՒ

„ՊԻՌՆԵՐ“

ՀԱՆԴԵՍԸ.

ՎՈՐՊԵՍՁԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՍՏԱՆԱ

ԲԱԺԱՆՈՐԴՅԱՐՎԵՐ

ԳԱՎԱՅՅՈՒՐՈՅԻ ՄՈՏ

ՀՀ Ազգային գրադարան



NL0863953

ՊԵՂԵՆԵՐԱԿԱՆ Կ

2390

ԲՅՈՒՐՈՅԻ ՊԱՀԵՎՈՑ

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ

ԶՐԱՄԱՆ

ՊԱՅՈՒՍԱԿ

ՎՐԱՆՆԵՐ

ԹՄԲՈՒԿՆԵՐ

ՇԵՓՈՐՆԵՐ

ՊԻՌՆԵՐԱԿԱՆ ԳՐԱԿԱ-
ՆՈՒԹՅՈՒՆ

Դիմել ՑԵՐԵՎԱՆ, Ա.քվյան 10.

ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԴԵՐ
Վ.Հ.Օ.ՌՈԴ.

ԳԻՆՆ Ե 5 ԿՈՊ.